

**ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ
Քաղաքացիական ծառայողի աշխատանքային ծրագրի և կատարողականի**

Տարեթիվը՝ 2010թ

Քաղաքացիական ծառայողի տվյալները՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար

Հիմնական աշխատանքները

No	Քաղաքացիական ծառայության պաշտոնիանձնագրով նախատեսված կոնկրետ ծառայողական պարտականություններին համապատասխան ծրագրված աշխատանքի անվանումը	Աշխատանքի տեսակը	Աշխատանքի նպատակը	Աշխատանքի գնահատման չափանիշը	Աշխատանքի արդյունքի ձևը	Կշիռ	Ժամկետը
						I կիս	Պլան
1	2	3	4	5	6		
1	Աշխատակազմի 2009թ. աշխատանքային ծրագրի կատարման վերլուծություն և 2011թ. աշխատանքային ծրագրի կազմում	Ընթացիկ	Աշխատակազմի 2009թ. կատարված աշխատանքների ամփոփում, վերլուծություն, 2011թ. իրականացվելիք աշխատանքների հստակեցում	2009թ. կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, սահմանված ժամկետում աշխատանքային ծրագրի կազմում	Տեղեկանք, ծրագիր	1	1
2	2011թ. բյուջետային ֆինանսավորման հայտերի, 2011-2013թթ պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերի կազմում և համապատասխան մարմիններին ներկայացում	Ընթացիկ	ՀՀ Սյունիքի մարզպետարանի 2011-2013թթ ռազմավարության հստակեցում, մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի գծով անհրաժեշտ ծախսերի պլանավորում	ՄԺԾՍ մշտապես գործող խորհրդի կողմից մշակված մեթոդական ցուցումներին և կողմնորոշիչ չափաքանակներին համապատասխան, սահմանված ժամկետում մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի հայտերի կազմում և ներկայացում համապատասխան մարմիններ	Ծրագիր, գրություն	3	4

3	<p>Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար նրանց ցուցաբերվող մեթոդական օգնության, մարզպետարան առաքված՝ մարզի համայնքների ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումների հետ տարվող աշխատանքների կազմակերպում</p>	<p>Ընթացիկ</p>	<p>Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար նրանց իրազեկվածության, մասնագիտական և այլ խնդիրներ լուծելու կարողությունների բարձրացում, մարզի համայնքների ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումներից բխող՝ պետական կառավարման և տարածքային կառավարման մարմիններին վերաբերող մասով անհրաժեշտ գործողությունների իրականացում և այդ որոշումների իրավական հսկողության ապահովում</p>	<p>Տեղական ինքնակառավարման մարմիններին՝ սահմանված ժամկետներում և սահմանված չափանիշներին համապատասխան մեթոդական ուղեցույցների, օրենսդրական փաթեթներ և այլ նյութերի տրամադրում, համայնքների ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումներին մարզպետարանում սահմանված կարգով ընթացք տալը</p>	<p>Գրություն, տեղեկանք, օրինակելի ձև, զեկուցագիր</p>	2	3
4	<p>ՀՀ Սյունիքի մարզպետարանի հաստիքացուցակի կազմում, մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի ծախսերի կատարման նախահաշիվների կազմման և դրանց ֆինանսավորման գործընթացի իրականացում</p>	<p>Ընթացիկ</p>	<p>ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակիցների վարձատրության ապահովում, մարզպետարանի աշխատակիցների վարձատրության ապահովում</p>	<p>ՀՀ օրենսդրությանը համապատասխան և սահմանված ժամկետում ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակիցների դրույքաչափերի ճշտում, հաստիքացուցակի կազմում և հաստատում մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի՝ չափորոշիչներին համապատասխան նախահաշիվների կազմում կատարված ծախսերին համապատասխան, սահմանված ժամկետում պարտավորությունների գրանցում և ֆինանսավորման իրականացում</p>	<p>Որոշում, նախահաշիվ, վճարման հանձնարարագիր, գրություն</p>	2	2

5	Գնման գործընթացի իրականացում	Ընթացիկ	ՀՀ Մյունիքի մարզպետարանի աշխատակազմի և մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի գծով ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերում	«Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան, սահմանված ժամկետում արձանագրությունների կազմում, տեխնիկական բնութագրերի մշակում, ծառայությունների գնման պետական պայմանագրերի և համաձայնագրերի կնքում և ներկայացում համապատասխան մարմիններ	Պայմանագիր, ընթացակարգի արձանագրություն	1	1
6	ՀՀ 2011թ. պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու նպատակով մարզի համայնքներից ստացված սուբվենցիայի հայտերի ամփոփում և ներկայացում	Ընթացիկ	Համայնքների հրատապ խնդիրների լուծում	Համայնքների կողմից կազմված նպատակային հատկացումների հայտերի ստացում, վերլուծություն և ներկայացում համապատասխան մարմին	Ծրագիր, գրություն	1	1
7	Հաշվետվությունների ընդունում և ներկայացում	Ընթացիկ	ՀՀ օրենքների, կառավարության որոշումների, գերատեսչությունների հանձնարարականների կատարում	Հաշվետվությունների ընդունում և ներկայացում համապատասխան մարմիններ՝ պահանջվող ձևերով և սահմանված ժամկետներում	Գրություն, տեղեկանք	2	3
8	Մարզպետարանի աշխատակազմի հիմնական և շրջանառու միջոցների հաշվառման, մաշվածության հաշվարկման աշխատանքների իրականացում, նյութական արժեքների գույքագրում, ժամանակակից տեխնիկական միջոցների և գրենական ու տնտեսական ապրանքների ձեռքբերում	Ընթացիկ	Մարզպետարանի աշխատակազմին ամրացված հիմնական և շրջանառու միջոցների հաշվառման արժանահավատության ապահովում, պետական սեփականության պահպանման նկատմամբ վերահսկողություն, ստորաբաժանումներին գրենական, տնտեսական ապրանքներով և տեխնիկական միջոցներով ապահովում	Մարզպետարանի աշխատակազմին ամրացված հիմնական և շրջանառու միջոցների սահմանված կարգով, ժամկետում և գործող չափոփոշիչներին համապատասխան հաշվառման առկայությունը: Ամրագրված գույքի ամբողջությունը, անհրաժեշտ տեխնիկական միջոցների հագեցվածությունը և գրենական ու տնտեսական ապրանքների առկայությունը	Տեղեկանք, հրաման, հաշվառման ակտ, գրություն, հայտ, զեկուցագիր	1	1

9	<p>ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում վարչական հսկողության իրականացման 2010 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն ուսումնասիրությունների իրականացում ծրագրով նախատեսված համայնքների ղեկավարների աշխատակազմերում</p>	Ընթացիկ	<p>2010 թվականին ծրագրով նախատեսված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների՝ օրենսդրության պահանջներին համապատասխան կատարման ապահովում</p>	<p>Հսկողության արդյունքում սահմանված չափանիշներին համապատասխան կատարված ուսումնասիրություններ, թերությունների դեպքում դրանց վերաբերյալ արձանագրությունների առկայություն</p>	<p>Զեկուցագիր, արձանագրություն, գրություն, որոշում, տեղեկանք</p>	1	1
10	<p>ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մարզպետարանի պատվիրատվությամբ հիմնանորոգվող օբյեկտներում հսկողության իրականացում, ինչպես նաև այլ պատվիրատուների կողմից կատարվող շինարարական աշխատանքների համակարգում</p>	Ընթացիկ	<p>Գործող շինարարական նորմերի և կանոնների պահանջների համապատասխանության ապահովում</p>	<p>Անհրաժեշտ փաստաթղթերի ժամանակին, ամբողջ ծավալով, պատշաճ որակով կազմում, ներկայացում և իրազեկում</p>	<p>Որոշում, թերությունների ակտ, փորձարկման ակտ, կատարողական ակտ, փաստագրման ակտ</p>	2	3
11	<p>Քաղաքացիների դիմում-բողոքների ընդունում և քաղաքացիների ընդունելության կազմակերպում</p>	Ընթացիկ	<p>Բարձրացված հարցերի քննարկում և ուսումնասիրում</p>	<p>Բարձրացված հարցերին հիմնավորված և սահմանված ժամկետներում պարզաբանված պատասխանի տրամադրում</p>	Գրություն	3	4

12	<p>Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող գոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ բնակարանային խնդիրների լուծմանն աջակցելու նպատակով ուսումնասիրության իրականացում, ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով չշահագործվող, վերականգնման ենթակա անհատական տների վերականգնում, փախստականների համար կառուցված բնակարանների սեփականաշնորհման աշխատանքներին աջակցում</p>	Ընթացիկ	<p>ՀՀ կառավարության 09.06.2005 թ. N 947-Ն որոշման պահանջների կատարման ապահովում ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով տուժած քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավում, բնակարանների նկատմամբ փախստականների սեփականության իրավունքի ապահովում</p>	<p>Անձնական գործերի նախապատրաստում, հաշվառում, մարզպետարանի բնակարանային հարցերի հանձնաժողովում քննարկում և ՀՀ պաշտպանության նախարարությանը անհրաժեշտ տվյալների ներկայացում, անհրաժեշտ փաստաթղթերի կազմում, մարզպետի որոշման նախագծի պատրաստում, վերականգնման ենթակա անհատական տների վերաբերյալ փաստաթղթերի կազմում և ներկայացում, պայմանագրերի կնքում, ՀՀ կառավարության կողմից հատկացված միջոցներով պայմանագրային պարտավորությունների կատարում</p>	<p>Անձնական գործ, որոշման նախագիծ, արձանագրություն, հաշվառման ցուցակ, գրություն, թերությունների ակտ, նախահաշիվ, պայմանագիր, կատարողական ակտ</p>	1	1
13	<p>Մարզի բնակավայրերում խմելու ջրի, աղբահանության և բնակարանային սպասարկման դիմաց վարձավճարների հավաքագրման համակարգում</p>	Ընթացիկ	<p>Վարձավճարների հավաքագրման բարելավում</p>	<p>Համապատասխան ուսումնասիրությունների անցկացում, փաստաթղթերի կազմում, ամփոփ տեղեկատվության ներկայացում:</p>	<p>Գրություն, տեղեկանք</p>	1	1
14	<p>Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների միջհամայնքային երթուղիների կազմակերպում</p>	Ընթացիկ	<p>մարզի տարածքում ուղևորների կանոնավոր փոխադրում ՀՀ կառավարության 2001թ օգոստոսի 16, N 762 որոշման պահանջների ապահովում</p>	<p>Երթուղիների մրցույթների անցկացում, կանոնավոր չվերթի առկայություն</p>	<p>Արձանագրություն, տեղեկանք, որոշում, ժամանակացույց</p>	1	1

15	<p>2010թ. պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շահագործման, պահպանման, ձմեռային պահպանության և անվտանգ շահագործման աշխատանքների կազմակերպում, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ ՀՀ 2010թ. պետական բյուջեով նախատեսված աշխատանքների համակարգում</p>	Ընթացիկ	<p>ՀՀ կառավարության 2004թ դեկտեմբերի 9, N 1942-Ն որոշման պահանջների ապահովում Ֆինանսական միջոցների ապահովման նպատակով աշխատանքների փաստաթղթերի կազմում և ներկայացում, 2010թվականի պետական բյուջեի պահանջների կատարում</p>	<p>Գնահատման համապատասխան ակտերի առկայություն Թերությունների վերաբերյալ տեղեկանքի կազմում, այցելություն կառուցվող օբյեկտներ, ուսումնասիրությունների կատարում, անհրաժեշտության դեպքում առաջարկությունների ներկայացում</p>	<p>Տեղեկանք, որոշում, ժամանակացույց , արձանագրություն</p>	1	1
16	<p>Գյուղատնտեսական կենդանիների հաշվառման կազմակերպում, մարզի տոհմաբուծարանների և արհեստական սերմնավորման կայանների գործունեության համակարգում</p>	Ընթացիկ	<p>Գյուղատնտեսական կենդանիների անասնագիտաքանակի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում, գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին բարձր մթերատու և բարձրակիթ մատղաշով ապահովում</p>	<p>Մարզում առկա գյուղատնտեսական բոլոր տեսակի կենդանիների անասնագիտաքանակի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում, բարձր մթերատու և բարձրակիթ մատղաշի գլխաքանակի աճի առկայությունը</p>	<p>Որոշում, տեղեկանք, փաստաթուղթ, գրություն</p>	1	1

17	<p>Աջակցություն մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին անհրաժեշտ գարնանացան և աշնանացան սերմերի, պարարտանյութերի, վառելանյութերի, թունաքիմիկատների և պահեստամասերի ձեռք բերման գործում, գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ազրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքների համակարգում</p>	Ընթացիկ	<p>Գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին անհրաժեշտ քանակի գարնանացան և աշնանացան սերմերով, պարարտանյութերով, վառելանյութով, թունաքիմիկատներով, պահեստամասերով, տարբեր տեսակի հիվանդություններից և վնասատուներից գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանության ապահովում</p>	<p>Գարնանացան և աշնանացան որակյալ սերմերի քանակի, անհրաժեշտ քանակի և որակի պարարտանյութերի, վառելանյութի, թունաքիմիկատների և պահեստամասերի պահանջարկի վերաբերյալ սահմանված կարգով և ժամկետներում տեղեկանքի կազմում և ներկայացում, ցողարկման, սրսկման, կարանտինային միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութերի տրամադրում</p>	Տեղեկանք, գրություն, ակտ	1	1
18	<p>Մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցման, պահպանման և շահագործման աշխատանքների համակարգում, ոռոգման ջրի մատակարարման և վարձավճարների գանձման ընթացքի վերաբերյալ տվյալների հավաքագրում</p>	Ընթացիկ	<p>Ոռոգվող հողատարածքների ոռոգման ջրով ապահովում, գործընթացի պատշաճ ապահովում, թերությունների վերհանում և վերացում</p>	<p>Ընդլայնված ոռոգելի հողատարածքի մակերեսի վերաբերյալ համեմատական տվյալների, ինչպես նաև ոռոգման ջրի վարձավճարների գանձման ընթացքի և չափերի վերաբերյալ սահմանված կարգով և ժամկետներում հավաքագրված տվյալների առկայությունը</p>	Տեղեկանք, փաստաթուղթ, գրություն	1	1
19	<p>Մարզի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների իրականացման և կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման աշխատանքների համակարգում</p>	Ընթացիկ	<p>Անասնազիաքանակի անկման մեղմում, վարակիչ հիվանդություններից կենդանիներին զերծ պահում</p>	<p>Իրականացված հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ տվյալների առկայությունը</p>	Տեղեկանք, փաստաթուղթ, գրություն	1	1

20	<p>ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացման 2010 թվականի տարեկան աշխատանքային պլանի կազմում և կատարման կազմակերպում</p>	Ընթացիկ	<p>ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2010 թվականին նախատեսված միջոցառումների իրականացում</p>	<p>Սահմանված չափանիշներին համապատասխանող, սահմանված ժամկետներում կազմված 2010 թվականի տարեկան աշխատանքային պլանի և դրա կատարման մասին հաշվետվության առկայություն</p>	Պլան, զեկուցագիր, տեղեկանք, գրություն	1	1
21	<p>Աջակցություն արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանության և օգտագործման, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների, մարզի անտառների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված աշխատանքների իրականացմանը</p>	Ընթացիկ	<p>Արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանության ռեժիմների բնականոն ընթացքի, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ պայքարի միջոցառումների իրականացում, մարզի անտառների պահպանության, անտառվերականգնման աշխատանքների ապահովում</p>	<p>Արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանության ռեժիմների բնականոն ընթացքի որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեպքերի բացառմանն ուղղված գործողությունների, ինչպես նաև անտառների պահպանության, անտառվերականգնման աշխատանքների վերաբերյալ համապատասխան ժամանակացույցերի առկայությունը, տեղեկատվության կազմում և ներկայացում</p>	<p>Զեկուցագիր, տեղեկանք, արձանագրություն, ժամանակացույց, գրություն</p>	1	1
22	<p>Բնապահպանության մասին ՀՀ օրենսդրության կիրարկումն ապահովող միջոցառումների կազմակերպմանն օժանդակում</p>	Ընթացիկ	<p>Բնապահպանության մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ապահովում, մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, մարզում տնտեսավարող սուբյեկտների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից</p>	<p>Բնապահպանության օրենսդրության մասով ՏԻՄ-երի կայացրած օրինական որոշումների առկայություն, օրենսդրությանը հակասող որոշումների նկատմամբ Վարչության` սահմանված կարգով կատարած քայլերի առկայություն, տեղեկատվության կազմում, ներակայացում և իրազեկում</p>	<p>Զեկուցագիր, արձանագրություն, գրություն, որոշում</p>	1	1

23	<p>Ընդերքի օգտագործման, պահպանության և հողի բերրի շերտի օգտագործման վերահսկողության իրականացման, չարտոնագրված աղբավայրերի վերացման, աղբահանության և թափոնների մշակման գործընթացի կազմակերպման աշխատանքներին աջակցության ապահովում</p>	Ընթացիկ	<p>Ընդերքի և հողերի պահպանության ապահովում, սանիտարահիգիենիկ նորմերի պահպանում</p>	<p>Ընդերքի և հողերի պահպանության, հողի բերրի շերտի օգտագործման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության կազմում, ներկայացում և իրազեկում, մարզի վարչական տարածքի սահմաններում սանիտարական մաքրման սխեմաների առկայություն</p>	<p>Տեղեկանք, գրություն, զեկուցագիր</p>	1	1
24	<p>Մարզում գործող բնապահպանության ոլորտի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների, միջազգային կառույցների, հիմնադրամների, բարեգործական և հասարակական կազմակերպությունների, բնապահպանությանը և բնօգտագործմանն առնչվող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի վարում</p>	Ընթացիկ	<p>Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման, բնապահպանական խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովում</p>	<p>Անհրաժեշտ տեղեկատվական շտեմարանի առկայությունը</p>	<p>Տեղեկանք, զեկուցագիր, արձանագրություն</p>	1	1
25	<p>Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման օժանդակում ՀՀ Սյունիքի մարզի 1 քաղաքային և 12 գյուղական համայնքներում</p>	Ընթացիկ	<p>Սյունիքի մարզի 1 քաղաքային և 12 գյուղական համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների `օրենսդրության պահանջներին համապատասխան անցկացում</p>	<p>Իրական պատկերին համապատասխանող, սահմանված ժամկետում ՀՀ Սյունիքի մարզպետին ներկայացված ընտրությունների անցկացման ժամանակացույց, սահմանված չափանիշներին համապատասխանող և սահմանված ժամկետներում կազմված, ընտրություններ նշանակելու մասին մարզպետի որոշումների նախագծերի, համայնքների ղեկավարներին ներկայացված մեթոդական նամակների առկայություն</p>	<p>Ժամանակացույց, որոշման նախագիծ, գրություն, զեկուցագիր</p>	1	1

26	<p>Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրության կիրարկումն ապահովող միջոցառումների կազմակերպում</p>	Ընթացիկ	<p>Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարում մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում</p>	<p>Մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նիստերի, մրցությունների և ատեստավորման գործընթացների, համայնքային ծառայության մասով ՏԻՄ-երի կայացրած օրինական որոշումների առկայություն, օրենսդրությանը հակասող որոշումների նկատմամբ Վարչության՝ սահմանված կարգով կատարած քայլերի առկայություն, սահմանված ժամկետներում և կարգով ՀՀ տարածքային կառավարման նախարարության՝ ոլորտին վերաբերող հանձնարարականներով Վարչությանը վերապահված գործառույթների կատարում</p>	<p>Զեկուցագիր, արձանագրություն, գրություն, որոշում, տվյալների էլեկտրոնային շտեմարան</p>	1	1
27	<p>ՀՀ Սյունիքի մարզի համայնքների խոշորացմանն ուղղված համապատասխան գործառույթների իրականացման ապահովում</p>	Ընթացիկ	<p>Սյունիքի մարզում օպտիմալ վարչատարածքային բաժանման ապահովում</p>	<p>Սյունիքի մարզի 5 համայնքների միավորման վերաբերյալ սահմանված ժամկետում ներկայացված և տրված չափանիշներին համապատասխանող տարբերակների առկայություն</p>	<p>Առաջարկություն, զեկուցագիր, գրություն, տեղեկանք</p>	1	1

28	<p>Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տեղեկատվության հետ տարվող աշխատանքների կազմակերպում, ՀՀ Սյունիքի մարզի համայնքների, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների, ՀՀ Սյունիքի մարզում գործունեություն ծավալող միջազգային կառույցների, հիմնադրամների, բարեգործական կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանների վարում</p>	Ընթացիկ	<p>Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման և այլ խնդիրներ լուծման նպատակով հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզում գործունեություն ծավալող միջազգային կառույցների, հիմնադրամների, բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետության բարձրացում</p>	<p>Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, սահմանված չափանիշներին համապատասխանող, ստացված տեղեկատվության առկայություն, անհրաժեշտ տեղեկատվությունը չտրամադրելու դեպքում՝ համարժեք գործողությունների կատարում, տեղեկատվական շտեմարանների առկայություն</p>	Տեղեկանք, գրություն, զեկուցագիր, շտեմարան, արձանագրություն	2	3
29	<p>ՀՀ Սյունիքի մարզի խորհրդի գործունեության հետ կապված կազմակերպական աշխատանքների իրականացում, Նիստերի և խորհրդակցությունների կազմակերպում և արձանագրում</p>	Ընթացիկ	<p>Մարզի խորհրդի և այլ նիստերի ու խորհրդակցությունների բնականոն ընթացքի ապահովում, հանձնարարականների արձանագրում և դրանց կատարման ապահովում</p>	<p>Նիստերի կազմակերպական աշխատանքների պատշաճ իրականացում /մասնակիցների տեղեկացում, նյութերի տրամադրում և այլն/, արձանագրությունների արժանահավատություն, հանձնարարականների ճշգրիտ ամրագրում</p>	Արձանագրություն, հաշվառման մատյան, զեկուցագիր	1	1
30	<p>Ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների, պաշտպանության, զինապարտների հաշվառման, զինակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների առնչությամբ ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից տարվող աշխատանքներին օժանդակում</p>	Ընթացիկ	<p>Ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների, պաշտպանության, զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների առնչությամբ ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից տարվող աշխատանքների պատշաճ իրականացում</p>	<p>ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից տարվող աշխատանքների օժանդակմանն ուղղված՝ սահմանված ժամկետներում և կարգով իրականացված միջոցառումները</p>	Որոշում, արձանագրություն, զեկուցագիր, գրություն	1	1

31	<p>Օլիմպիադաների (առարկայական և շախմատային) ներդրողական, տարածքային, մարզային փուլերի կազմակերպում, «Հայոց եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն» և «Բնագիտություն» առարկաների ուսուցիչների առարկայական, «Լավագույն ուսուցիչ», «Լավագույն դաստիարակ» և «Լավագույն տնօրեն» մրցույթների, շարադրություն-մրցույթների և ասմունքի փառատոնների տարածքային, մարզային փուլերի ապահովում</p>	Ընթացիկ	Շնորհալի աշակերտների և առաջավոր ուսուցիչների բացահայտում	Մարզի բոլոր տարածաշրջանների դպրոցների ներգրավածությունը առարկայական օլիմպիադաներին, հեռավոր գյուղական դպրոցների մասնակցության աստիճանը, նախորդ տարիների նկատմամբ մասնակից օլիմպիականների աճի առկայությունը, արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության կազմումը, ներկայացումը և իրազեկումը	Արձանագրություն, տեղեկանք	1	1
32	<p>Հանրակրթական դպրոցների 2009-2010 ուստարվա նախնական և հիմնական կոմպլեկտավորումների վերահաշվարկում և ուսուցիչների տարիֆաորակավորման աշխատանքների կազմակերպում: Մահմանված կարգով դպրոցական խորհուրդների ձևավորում:</p>	Ընթացիկ	Մահմանված չափանիշների համաձայն դասարանների և տեղեկատվական բազայի ձևավորում: Դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների գործունեության ապահովում	Դպրոցներում ոչ մասնագետ կադրերի առկայության նվազեցում, կոմպլեկտավորվող դասարաններում աշակերտների ընդգրկվածության /խտության/ շեղումների բացառում: Համապատասխան իրավական ակտերով հաստատված դպրոցական խորհուրդների անվանական կազմերի առկայությունը	Տեղեկանք, որոշում	1	1

33	<p>Հանրակրթական ծրագրերի իրագործման և ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացն ուսումնասիրելու նպատակով համընդհանուր ուսումնասիրությունների կազմակերպում մարզի 10 հանրակրթական ուսումնական հաստատություններում , 11-րդ դասարանի աշակերտների 2009-2010 ուստարվա շարժի հաշվառում և վերահսկողություն: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում</p>	Ընթացիկ	<p>Դպրոցում պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի վարման օրինականության ապահովում, ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում: ՆՈԻՀ-երի կողմից կրթության մասին օրենսդրության պահանջների բավարարում</p>	<p>Պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի առկայությունը, սահմանված ժամկետներում դրանց կատարման ընթացքը, 11-րդ դասարանի աշակերտների շարժում սխալների բացառումը, տեղեկատվության կազմում, ամփոփում և ներկայացումը</p>	Տեղեկանք, ժամանակացույց , գրություն	1	1
34	<p>Մարզի հանրակրթական դպրոցներում ռազմագիտության կաբինետների և հայրենասիրական անկյունների ձևավորում և կահավորում, 11-րդ դասարանցիների 2-օրյա դաշտային ռազմական պարապմունքների կազմակերպում և անցկացում</p>	Ընթացիկ	<p>Ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքի բարելավում, աշակերտների կրակային պատրաստության փորձի և հմտությունների ձեռքբերում</p>	<p>Զետեղարանների կահավորում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, ուսումնական զենքի պահման սենյակների վերաբերյալ համապատասխան ակտերի առկայություն, մարզի 2010 թվականի ուսումնական զենքի հայտի ներկայացում</p>	Ակտ, տեղեկանք, զեկուցագիր, գրություն	1	1
35	<p>Մարզի սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային համայնքների հանրակրթական դպրոցների ըստ մասնագիտությունների նպատակային ընդունելության գործուղումների գործընթացի կազմակերպում</p>	Ընթացիկ	<p>Սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային համայնքների հանրակրթական դպրոցներում բարձրագույն մանկավարժական կադրերով ապահովվածության խնդիրը</p>	<p>Բարձրագույն մասնագիտական կադրերով հանրակրթական դպրոցների ապահովվածության աստիճանը</p>	Գործուղման հայտ, գրություն	1	1

36	<p>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ ներառական ուսուցմամբ 5 դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և տնային ուսուցմամբ սովորողների նկատմամբ վերահսկողության իրականացում</p>	Ընթացիկ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ սահմանված ցուցիչների և կարիքի գնահատման առկայությունը, աշխատանքի ընդգրկվածությունը նշված դպրոցներում	Տեղեկանք	1	1
37	<p>Մեթոդական գրականության, դասագրքերի սահմանված ժամկետներում մարզային ենթակայության դպրոցներին բաշխման աշխատանքների կազմակերպում, ատեստատների, վկայականների և գովասանագրերի բաշխում հանրակրթական ուսումնական հաստատություններին</p>	Ընթացիկ	Սահմանված ժամկետներում մարզի դպրոցներին առարկայական դասագրքերով, անհրաժեշտ մեթոդական գրականությամբ, ուղեցույցներով ապահովում	Աշակերտների՝ դասագրքերով ապահովվածության աստիճանը, սահմանված ժամկետներում ատեստատների, վկայականների և գովասանագրերի հասկացում	Տեղեկանք, գրություն, զեկուցագիր	1	1
38	<p>Պետական ավարտական և միասնական քննությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքների կազմակերպում</p>	Ընթացիկ	Պետական միասնական և ավարտական քննությունների՝ սահմանված կարգով անցկացման ապահովում	Քննությունների ընթացքի վերաբերյալ դիմորդների, ծնողների, ՀՀ ԿԳ նախարարության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների բողոքների առկայությունը /բացակայությունը	Տեղեկանք, գրություն, զեկուցագիր	1	1
39	<p>Պետական տոների, ազգային ծեսերի ու ծիսակատարությունների վերականգման ու տարածման, արվեստների ու արհեստների զարգացման ու խրախուսման զանգվածային միջոցառումների կազմակերպում, Աջակցության պատմական և մշակութային հուշարձանների պահպանության և վերականգնման աշխատանքներին</p>	Ընթացիկ	Մարզում մատաղ սերնդի ու երիտասարդության գեղագիտական դաստիարակության բարձրացման խթանում, Մարզի պատմամշակութային հուշարձանների պահպանության ապահովում	Զանգվածային միջոցառումների ծրագրերի առկայություն, տեղեկատվության կազմում, ներկայացում և իրազեկում, Համապատասխան ՀԳՄՏ ծառայության և ՏԻՄ-երի հետ համատեղ ծրագրերի առկայությունը, անցկացված միջոցառումները	Տեղեկանք, զեկուցագիր, գրություն	1	1

40	<p>Բնակչության շրջանում ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու ուղղությամբ նպաստավոր պայմանների ստեղծման օժանդակություն, Երիտասարդ ստեղծագործողներին աջակցության ցուցաբերում, ստուգատեսների, մրցույթների, ցուցահանդեսների և փառատոնների պարբերաբար կազմակերպում: Մարզի տարածքում գործող, պետական գրանցում ունեցող հասարակական, կրոնական կազմակերպությունների հետ համագործակցության կազմակերպում</p>	Ընթացիկ	<p>Առողջ սերնդի ձևավորում, շնորհաշատ երիտասարդ ստեղծագործողների հայտնաբերում: Հայ առաքելական եկեղեցու դերի բարձրացումը բնակչության շրջանում</p>	<p>Սպորտային միջոցառումների իրականացում, տեղեկատվության կազմում և իրազեկում, փառատոնների, ստուգատեսների, մրցույթների, ցուցահանդեսների անցկացման ժամանակացույցի առկայությունը, անցկացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության կազմումը և իրազեկումը, Համատեղ ծրագրի առկայությունը և անցկացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության կազմումը ներկայացումը, մարզի և հանրապետության սրբավայրեր ու խտազնացությունների անցկացումը</p>	Տեղեկանք, եզրակացություն, զեկուցագիր, գրություն	1	1
41	<p>Մարզում պետական առողջապահական ծրագրերի, բնակչության առողջության ցուցանիշների գնահատման իրականացում</p>	Ընթացիկ	<p>ԱԱՊ ռազմավարության, մոր և մանկան առողջության պահպանման իրականացում, տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ապահովում, հիվանդանոցային /մասնագիտական/ բուժօգնության որակի բարելավում, հանրային առողջության ցուցանիշների վերլուծության ապահովում</p>	<p>Ընտանեկան բժշկի սպասարկման ոլորտում բնակչության ընդգրկվածության աճի առկայությունը, մարզում ԱԱՊ բնագավառի բուժ. սպասարկման որակը բնութագրող ցուցանիշների համապատասխանելիությունը գործող ստանդարտներին, մանկական և մայրական մահացության, ինչպես նաև բժշկաժողովրդագրական, հիվանդացության, հաշմանդամության և ֆիզիկական զարգացման եռամսյակային ցուցանիշների դինամիկ ուսումնասիրության վերաբերյալ տեղեկատվության կազմում, վերլուծություն և ներկայացում</p>	Առաջարկություն, տեղեկանք, եզրակացություն	1	1

42	<p>Մարզպետարանի համակարգի առողջապահական հաստատությունների աշխատանքների կազմակերպում, բնակչության անվճար բուժօգնության իրականացման կազմակերպում, ՀՀ ԱՆ տարածքային ծառայությունների /ՄԳ, ՊՀՀՏ/ հետ համագործակցության կազմակերպում և իրականացում</p>	Ընթացիկ	<p>Մարզպետարանի համակարգի ՓԲ ընկերությունների արդյունավետ կառավարման և պետական պատվերի շրջանակներում բուժսպասարկման, սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողության գործընթացին աջակցության, ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների կանխարգելման գործընթացի իրականացման ապահովում</p>	<p>Ընկերությունների հաստատված ամենամյա հաստիքացուցակների, ծախսերի նախահաշիվների, վճարովի ծառայությունների ցանկի և սակագների առկայությունը, ուղեգրված հիվանդների տեսակարար կշիռը Սանիտարահիգիենիկ նորմերից շեղումների բացակայությունը, պետական պատվերի կատարողականի ծավալների ուսումնասիրության վերաբերյալ տեղեկատվության առկայությունը, պետական պատվերի շրջանակներում իրականացված աշխատանքների վերաբերյալ ամփոփ վերլուծական տեղեկատվության կազմումը, ներկայացումը և իրազեկումը</p>	Ուղեգիր, որոշում, գրություն տեղեկանք, առաջարկություն, միջնորդագիր	2	3
43	<p>Սոցիալական ապահովության ծրագրերի վերաբերյալ պարզաբանումների իրականացում, պետական նպաստների և միանվագ դրամական օգնության նշանակման, վճարման օրինականության վերահսկողության իրականացում</p>	Ընթացիկ	<p>Իրականացվող ծրագրերի լուսաբանման և իրազեկման ապահովում, գերավճար գումարների նվազեցման և հասցեականության ապահովում, կարիքավոր ընտանիքներին աջակցություն</p>	<p>ԶԼՄ-ներին համապատասխան տեղեկատվության տրամադրում, ՄՕՏԳ-ների կողմից ամենամյա տեղեկատվության հավաքագրում, ներկայացում և իրազեկում</p>	Տեղեկանք, որոշում, արձանագրություն	1	1
44	<p>«Վարձատրվող հասակական աշխատանքներ» ծրագրերի քննարկման, հաստատման աշխատանքների կազմակերպում</p>	Ընթացիկ	<p>Համապատասխան ծրագրերի հաստատման համար Հանձնաժողովի աշխատանքների բնականոն ընթացքի ապահովում</p>	<p>Տեղեկատվության ապահովում, համայնքների կողմից ծրագրերի ժամկետին ներկայացում, արձանագրությունների և որոշումների նախապատրաստում</p>	Որոշում, արձանագրություն, տեղեկանք	1	1

45	<p>Մարզում բնակվող հաշմանդամների հաշվառում և նրանց համար մշակված անհատական վերականգնողական ծրագրերի իրականացման օժանդակություն, տուն-ինտերնատներ գործուղվել ցանկացողների հաշվառում, հաշմանդամներին վերականգնողական պարագաներով ապահովման աշխատանքների կազմակերպում, Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 65 ամյակին նվիրված սոցիալական աջակցության միջոցառումների իրականացում</p>	Ընթացիկ	<p>Հաշմանդամ քաղաքացիներին սպասարկում, նախատեսված անհատական պարագաների տրամադրման, միայնակ անօգնական ծերերին տուն-ինտերնատներում տեղավորելու խնդրում աջակցության ապահովում, հաշմանդամների սոցիալական վիճակի բարելավում, ՀՊ-ի մասնակիցներին աջակցության տրամադրման ապահովում</p>	<p>Վերականգնողական պարագաների կարիք ունեցող հաշմանդամների հաշվառման առկայությունը, համապատասխան մարմիններին տեղեկատվության տրամադրումը և իրագրելումը: Նախատեսված ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների անցկացում, ճշտված փաստաթղթերի հավաքագրում, հաշվառում և տվյալների ներկայացում</p>	Տեղեկանք, զեկուցագիր, եզրակացություն, կարգադրություն	1	1
46	<p>Սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների կազմակերպում, սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող հասարակական և այլ կազմակերպությունների գործունեության աջակցության իրականացումն ուսումնասիրությունների անցկացում մարզի ՄՕՏԳ-ներում</p>	Ընթացիկ	<p>Սոցիալապես անապահով խավերին աջակցության տրամադրում, խոցելի խմբերի վիճակի բարելավում, ընտանեկան նպաստի հասցեականության ապահովում</p>	<p>Համատեղ ծրագրերի առկայությունը, իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության կազմումը, ներկայացումը և իրագրելումը, խոցելի խմբերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տրամադրում, թարմացված տվյալների բազայի առկայություն, աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների ժամկետին իրականացում</p>	Եզրակացություն , ակտ, տեղեկանք, զեկուցագիր, որոշում	1	1

47	Մարզպետի որոշումների և կարգադրությունների, աշխատակազմի ղեկավարի հրամանների, մարզային ենթակայության կազմակերպությունների և ընկերությունների ընդունած իրավական ակտերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցման ապահովում	Ընթացիկ	Գրագետ և օրենսդրության համապատասխան փաստաթղթերի կազմման և օրինականության ապահովում	Դիտողությունների բացակայությունը, իրավական հիմնավորումների առկայությունը	Եզրակացություն , որոշում, կարգադրություն , հրաման, փաստաթուղթ, արձանագրություն	1	1
48	Էլեկտրոնային և թղթային փաստաթղթաշրջանառության կազմակերպում, մտից և ելից փաստաթղթերի գրանցում, փաստաթղթերի արխիվացում	Ընթացիկ	Գործավարության կարգի պահանջների և փաստաթղթերի պահպանության ապահովում	Չգրանցված փաստաթղթերի բացառում, սահմանված ժամկետներում փաստաթղթերի առաքում Արխիվի մասին ՀՀ օրենքին համապատասխան փաստաթղթերի պահպանման առկայություն	Էլեկտրոնային և թղթային գրանցամատյան, փաստաթուղթ, ակտ	2	3
49	Հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	Ընթացիկ	Սահմանված ժամկետում հանձնարարականների կատարման ապահովում	Ժամկետանց հանձնարարականների բացառում	Արձանագրություն, փաստաթուղթ	2	3
50	Համակարգչային տեխնիկայի, ինտերնետային կայքի շահագործման, տեղային լոկալ և գլոբալ ցանցերի, Տրանսպորտային միջոցների, հեռախոսային և փոստային կապի, գազի, էլեկտրոգիայի և ջրամատակարարման սպասարկման աշխատանքների իրականացում	Ընթացիկ	մարզպետարանի գործավարության պահանջների և տեղեկատվության տրամադրման օպերատիվության, մարզպետարանի գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովում	Անխափան աշխատող տեխնիկական միջոցների և կապի առկայությունը, սահմանված չափաքանակների պահպանում	Գրություն, զեկուցագիր, ակտ, հայտ, պայմանագիր	1	1

51	<p>ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի եկամուտների հաշվառման ու վճարումների կազմակերպման մասին» N 750-Ն որշմամբ սահմանված կարգով մարզետարանին վերապահված լիազորությունների իրականացում</p>	Ընթացիկ	ՏԻՄ-երին գույքային հարկերի անդորրագրերի և ծանուցագրերի տրամադրման գործընթացի կազմակերպում	ՏԻՄ-երին գույքային հարկերի անդորրագրերի և ծանուցագրերի ապահովում	Տեղեկանք, գրություն	1	1
52	<p>Հայ-իրանական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի կողմից կնքված փոխըմբռնման հուշագրերով ամրագրված հանձնարարականների կատարման ապահովում</p>	Ընթացիկ	Միջմարզային համագործակցության խթանում	Կնքված փոխըմբռնման հուշագրի կետերի կատարում	Առաջարկություն, գրություն, տեղեկանք	1	1
53	<p>Մարզպետարանում ստացվող ՀՀ պաշտոնական և ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի, տեղեկագրերի ծանոթացում համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցներին, ՀՀ գործող օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունների և լրացումների մասին, անհրաժեշտության դեպքում, համապատասխան շրջաբերականների ուղարկում</p>	Ընթացիկ	Մարզպետարանի աշխատակիցների մասնագիտական-իրավական գիտելիքների բարձրացում, ՀՀ օրենսդրության պահանջների կատարում և տեղեկատվության ապահովում	Հաշվառման և ծանոթացման իրականացում Մարզխորհրդի նիստերին տեղեկատվության ներկայացում	Ծանոթացման թերթ, տեղեկանք, փաստաթուղթ, շրջաբերական	1	1

54	<p>Համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականության հողատարածքներից 2009թ. վարձակալությամբ հատկացման, կնքված վարձակալության պայմանագրերից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման և դրանց օգտագործման դիմաց հաշվարկված վարձավճարների գանձման աշխատանքների իրականացում</p>	Ընթացիկ	<p>Համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականության հողատարածքների նպատակային օգտագործման ապահովում</p>	<p>Սահմանված կարգի խախտմամբ հողօգտագործողների գործունեության բացառում, օգտագործվող հողատարածքների ընդլայնում, նախատեսված վարձավճարների գանձման ապահովում</p>	<p>Մարզպետի որոշում, արձանագրություն, վարձակալության պայմանագիր, տեղեկանք, զեկուցագիր</p>	1	1
55	<p>Համայնքների վարչական տարածքների պետական և համայնքային սեփականության հողերի վարձակալության տրման, գույքային իրավունքների պետական գրանցման և վարձավճարների գանձման աշխատանքների նկատմամբ վերահսկողության, համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողհատկացումների առաջարկություններին սահմանված կարգով ընթացք տալու գործառույթների իրականացում: Համայնքների վարչական տարածքների պետական և համայնքային սեփականության հողերի օտարման գործնթացի և գույքային իրավունքների պետական գրանցման նկատմամբ վերահսկողության իրականացում</p>	Ընթացիկ	<p>Համայնքների վարչական տարածքներում ապօրինի հողօգտագործման կանխում, կասեցում, վերացում, ներկայացված առաջարկությունների համաձայնեցման կամ մերժման գործընթացի ապահովում: Համայնքների վարչական տարածքներում օրենսդրական խախտումներով օտարված հողամասերի իսպառ վերացում</p>	<p>Ապօրինի հողօգտագործման դեպքերի առկայությունը, ներկայացված առաջարկությունների ուսումնասիրություն, սահմանված ժամկետներում լիազոր մարմիններին ներկայացում: Օրենսդրական խախտումներով օտարված հողամասերի առկայությունը</p>	<p>Տեղեկանք, գրություն, զեկուցագիր, եզրակացություն</p>	1	1

56	Համայնքների վարչական տարածքներում և նրանցից դուրս գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքներին օժանդակություն	Ընթացիկ	Հողերի նպատակային նշանակությունների /կատեգորիաների/ փոփոխությունների իրականացում	Հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների առկայությունը	Քարտեզ-Էսքիզ, հատակագիծ, բացատրագիր, արձանագրություն, առաջարկություն	1	1
57	Համայնքներում հողային պետական տեսչական աշխատանքների իրականացում: Մարզի սահմանանիշերի և գեոդեզիական կետերի պահպանման նկատմամբ վերահսկողություն	Ընթացիկ	Համայնքների վարչական տարածքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ օրենսդրության պահանջների խախտման դեպքերի բացահայտում և վերացում: Ունենալ չվնասված սահմանային և գեոդեզիական կետեր	Համայնքներում հողային հարաբերությունների բնագավառում ՀՀ օրենսդրության խատման դեպքերի, վնասված սահմանանիշերի և գեոդեզիական կետերի առկայությունը	Որոշում, ժամանակացույց, տեղեկանք, ստուգման ակտ, զեկուցագիր, առաջարկություն	1	1
58	Մարզի հողային հաշվեկշռի կազմում	Ընթացիկ	Ըստ սեփականության ձևերի, և ըստ նպատակային նշանակության հողերի ընթացիկ շարժի կազմում	Մարզի 109 համայնքների հողային հաշվեկշռների առկայությունը	Տեղեկանք, զեկուցագիր, առաջարկություն	1	1
59	Անձնակազմի կառավարման գծով աշխատանքային, այդ թվում ժամկետային պայմանագրերի կնքման, աշխատակազմի քաղաքացիական ծառայողների և քաղաքացիական ծառայողներ չհամարվող աշխատակիցների, մարզային ենթակայության կազմակերպությունների՝ ՓԲԸ-ների գործադիր տնօրենների, վերստուգողների, ՊՈԱԿ-ների գործադիր տնօրենների անձնական գործերի նախապատրաստման, վարման, հաշվառման և պահպանման աշխատանքների իրականացում	Ընթացիկ	ՀՀ աշխատանքային օրենսդրության և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենսդրության ապահովումՕրենսդրությամբ սահմանված կարգով անհատական աշխատանքային հարաբերությունների կարգավորում Քաղաքացիական ծառայության ավտոմատացված տեղեկատվական համակարգի շահագործման ապահովում: Միասնական տեղեկատվական կադրային բազայի ստեղծում: ՔՕԽ-ի հետ ինֆորմացիոն կապի իրականացում	Օրենսդրության պահանջներին հակասող կնքված աշխատանքային պայմանագրերի բացակայությունը: Համակարգչային ծրագրում անձնական գործերի ամբողջական փաթեթների ներմուծում, սխալների բացառում, տվյալների պարբերաբար թարմացում, անձնական գործերի ամբողջական փաթեթների, հաշվառման մատյանների /ձևերի/ ,պահպանման պայմանների առկայություն	Պայմանագիր, զեկուցագիր, Էլեկտրոնային և թղթային գրանցամատյան, անձնական գործ, հաշվառման մատյան, փաստաթուղթ	1	1

60	<p>Աշխատակազմի ստորաբաժանումների հետ համատեղ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների /նախագծերի/ նախապատրաստում և ներկայացում</p>	Ընթացիկ	<p>Քաղ. ծառայողների շփումների, խնդիրների, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հստակեցում</p>	<p>Առաջարկությունների մշակում և ներկայացում, դրանց վերաբերյալ ՔՕԽ-ի դիտողությունների բացակայություն</p>	Գրություն, փաստաթուղթ, որոշում	1	1
61	<p>ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքն ու եկամուտները հայտարարագրող մարզպետարանի աշխատողների հայտարարագրերի ներկայացման աշխատանքների կազմակերպում</p>	Ընթացիկ	<p>ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների իրականացում</p>	<p>Սահմանված կարգով և ժամկետներում, մարզպետարանի աշխատողների իրազեկում և անհատական տվյալների լրացում, հավաքագրում անձնական գործում</p>	Իրազեկման թերթիկ, տեղեկանք	1	1
62	<p>Աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման և ատեստավորման, քաղաքացիական ծառայողների և մարզային ենթակայության ՓԲԸ-ների գործադիր տնօրենների, վերստուգողների թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների նախապատրաստական աշխատանքների իրականացում և մրցույթների կազմակերպում, մրցույթի և ատեստավորման համար մարզպետարանի իրավասությունը սահմանող ՀՀ օրենսդրության բնագավառի հարցաշարերի մշակում</p>	Ընթացիկ	<p>Վերապատրաստման և ատեստավորման գործընթացի ապահովում, թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմած քաղաքացիների փաստաթղթերի ընդունում, հարցաշարերի ապահովում, մրցույթային հանձնաժողովի աշխատանքների բնականոն ընթացքի ապահովում, հայտարարված մրցույթի պատշաճ իրականացում</p>	<p>Տվյալ տարում աշխատակազմից պարտադիր վերապատրաստման և ատեստավորման ենթակա քաղաքացիական ծառայողների 1/3-ի պլանավորման առկայություն, վերապատրաստման հայտերի սահմանված ժամկետներում կազմում և ներկայացում, ՀՀ օրենսդրությանը համապատասխանող թեստային առաջադրանքների և մասնագիտական հարցաշարերի առկայություն, տրամադրում, դրանց հրապարակայնության ապահովում: Մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման մատյանների առկայությունը</p>	<p>Որոշում, կարգադրություն , հրաման, տեղեկանք, ատեստավորման թերթ, հայտ, գրություն, վկայական, արձանագրություն, եզրակացություն</p>	2	3

63	<p>ՀՀ Սյունիքի մարզպետի, մարզպետարանի ստորաբաժանումների գործունեության մասին լուրերի, հաղորդագրությունների պատրաստում, ՁԼՄ-ների հրապարակումների ամփոփ տեսության պատրաստման աշխատանքների իրականացում:</p>		<p>ՀՀ Սյունիքի մարզպետի, մարզպետարանի ստորաբաժանումների գործունեության մասին, ինչպես նաև հանրային տրամադրությունների, տեսակետների, առաջարկությունների մասին իրազեկվածության ապահովում</p>	<p>Մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեության, ՁԼՄ-ների հրապարակած նյութերի վերաբերյալ վերլուծական տեղեկանքների առկայությունը ՁԼՄ-ով մարզպետարանի գործունեության վերաբերյալ հրապարակված նյութերի առկայությունը</p>	<p>մամլո հաղորդագրություններ, վերլուծական տեղեկանքներ</p>	1	1
64	<p>ՀՀ պետական կառավարման մարմիններում ստեղծված միասնական տեղեկատվական հարթակի, մարզպետարանի պաշտոնական կայքի պատրաստում և սպասարկում</p>	Ընթացիկ	<p>Մարզպետարանի գործունեության վերաբերյալ իրազեկում լայն հասարակությանը: Հանրապետական մամուլում Սյունիքի մարզպետարանի գործունեության մասին հրապարակումների ամենօրյա արձագանքում, հաղորդագրությունների տրամադրում</p>	<p>Պարբերաբար թարմացված տեղեկատվության առկայությունը հարթակում, ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում տեղեկատվական նյութերի առկայությունը</p>	<p>Հաղորդագրություններ, վերլուծական նյութեր, տեղեկանք</p>	1	1
65	<p>Հանրապետական և մարզային լրատվամիջոցներով մարզպետարանի գործունեությանն առնչվող հասարակական հնչեղություն ունեցող խնդիրների , ինչպես նաև ՁԼՄ-ների հրապարակումների արձագանքում, պարզաբանումների, հերքումների պատրաստում , քննարկումների կազմակերպում: Հասարակական միավորումների հետ համատեղ աշխատանքային միջոցառումների պլանավորում, իրականացում, համատեղ լուսաբանում</p>	ընթացիկ	<p>Հասարակական միավորումների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում: Հրապարակված նյութերի ուսումնասիրություն, վերլուծական տեղեկանքների կազմում, առաջարկությունների և լուծումների ներկայացում, դրանց լուսաբանման կազմակերպում:</p>	<p>Հանրային լուսումների, հանրային քննարկումների առկայությունը: Հրապարակված խնդիրների վերաբերյալ պարզաբանումների, հերքումների առկայություն ՁԼՄ-ում:</p>	<p>Հեռուստահաղորդում, կլոբ սեղան հաղորդագրություններ, տեղեկանքներ</p>	1	1

66	<p>ԶԼՄ-ների հետ աշխատանք՝ ասուլիսների, հարցազրույցների, հանդիպումների կազմակերպում ՀՀ Սյունիքի մարզպետի եւ այլ պաշտոնյաների հետ:</p>	ընթացիկ	<p>Մարզպետարանի գործունեության վերաբերյալ ԶԼՄ-ների կողմից ամբողջական տեղեկատվություն ստանալու մատչելիության, ինչպես նաև ԶԼՄ-ների եւ հասարակության հետ օպերատիվ հետադարձ կապի ապահովում</p>	ԶԼՄ-ների միջոցառումներին պաշտոնյաների մասնակցությունը:	Ասուլիս, հեռուստահաղոր դում հարցազրույց հաղորդագրությ ուններ	1	1
67	<p>ՀՀ Սյունիքի մարզպետարանի գործունեության ծրագրից եւ տարեկան միջոցառումներից ու գերակա խնդիրներից բխող աշխատանքների, մարզխորհրդի նիստերի, մարզպետի եւ համայնքապետերի հաշվետվությունների, քաղաքացիների ընդունելության լուսաբանում</p>	ընթացիկ	<p>Մարզպետարանի գործունեության հրապարակայնության եւ թափանցիկության ապահովում</p>	Հրապարակված տեղեկատվության առկայություն	մամուլի հաղորդագրությ ուններ,	1	1
68	<p>Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացում, դժվար իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերում, նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում</p>	Ընթացիկ	<p>Մարզում ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանվածությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի կատարման ապահովում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին աջակցության հասցեականության ապահովում</p>	Մշակված ծրագրերի առկայությունը, ծրագրում ընդգրկված թիրախային խմբերի վերաբերյալ տեղեկատվության կազմում և ներկայացում, Հաշվառված երեխաների համար ծրագրերի և իրականացված միջոցառումների վերաբերյալ առկայությունը:	Ծրագիր, դեպքի վարման փաթեթ, տեղեկանք	1	1

69	<p>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանության իրականացում և հաշմանդամ երեխաների կարիքների բացահայտում</p>	Ընթացիկ	<p>Մարզում հանրակրթությունից դուրս մնացած և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկվածության ապահովում հանրակրթական /նաև հատուկ/ հաստատություններ, հատուկ կրթության պայմանների կարիք չունեցող երեխաների մուտքի կանխարգելում հատուկ կրթական հաստատություններ</p>	<p>Մարզի բոլոր համայնքներից տեղեկատվության առկայությունը, վկայագրերի տրամադրումը</p>	Վկայագիր, ցուցակ, տեղեկանք	1	1
70	<p>Մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների տեղավորման հետ կապված կողմնորոշման խնդիրների քննարկում, նրանց իրավունքների և շահերի պաշտպանության իրականացում</p>	Ընթացիկ	<p>ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայություններից ստացված տեղեկատվության համաձայն հետագա վարքային շեղումները կանխելու նպատակով աշխատանքների կատարման ապահովում</p>	<p>Անչափահաս իրավախախտների թվի վերաբերյալ համեմատական վերլուծական տեղեկանքի առկայությունը</p>	Եզրակացություն , տեղեկանք	1	1
71	<p>Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագրերի կազմում, Որդեգրման ենթակա երեխաների հաշվառման իրականացում, որդեգրել ցանկացող անձին որդեգրման հնարավորության մասին եզրակացության տրամադրում</p>	Ընթացիկ	<p>Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց սպեցիֆիկ հիմնախնդիրների վեր հանում, ՀՀ օրենսդրությամբ սոցիալական երաշխիքների ապահովում, Որդեգրել ցանկացող անձի կողմից ներկայացված փաստաթղթերի ճշտության ստուգման, կենսապայմանների ուսումնասիրության և որդեգրել ցանկացող անձի հաշվառման ապահովում</p>	<p>Մշակված ծրագրերի առկայությունը, իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության կազմում, ներկայացում և իրազեկում, Կենտրոնացված հաշվառման , ինչպես նաև սահմանված ժամկետներում տրամադրված եզրակացությունների առկայությունը</p>	Անհատական վերականգնողական ծրագիր, անձնական քարտ, եզրակացություն, տեղեկանք	1	1

72	<p>Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառման կազմակերպում, Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված կրթական, ուսուցողական աշխատանքների կազմակերպում</p>	Ընթացիկ	<p>Երեխաների իրավունքների իրազեկման ապահովում, Երեխաների իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկման ապահովում, համայնքային մակարդակում երեխաների իրավունքների պաշտպանության գործընթացների համակարգում</p>	<p>Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ, 300 և ավելի բնակչություն ունեցող 20 համայնքներում այցելություններ և տեղերում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը</p>	Արձանագրություն, Տեղեկանք	1	1
73	<p>Անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների վերահաշվառում /փաստագրում/, անապահով ընտանիքների հայտնաբերում և հաշվառում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, եկամուտների, ընտանիքի կազմի և սեփականության վերաբերյալ քաղաքացիների հայտարարագրած տեղեկությունների հավաստիության ճշգրտում</p>	Ընթացիկ	<p>Անապահով ընտանիքներին աջակցության տրամադրում, տրամադվող նպաստի և հրատապ օգնության հասցեականության արդյունավետության բարձրացում</p>	<p>Յուրաքանչյուր ամիս սահմանված ժամկետներում հավաքագրված փաստաթղթերի հավաստիության ճշտում, տնային այցելություններ, տեղեկատվական բազայի առկայություն, շահառու նպաստառուների ներկայացրած փաստաթղթերի հավաստիության ճշտում, կազմում և ներկայացում</p>	Եզրակացություն , առաջարկություն , կարգադրություն , տեղեկանք	1	1
74	<p>Աղքատության ընտանեկան նպաստի և հրատապ օգնության նշանակման աշխատանքների իրականացում սոցիալական աջակցության խորհրդի հետ համատեղ</p>	Ընթացիկ	<p>Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների սոցիալական վիճակի ուսումնասիրություն և ընդգրկում ընտանեկան նպաստի համակարգում, ոչ նպաստառու ընտանիքներին դրամական օգնության նշանակում</p>	<p>Սահմանված ժամկետներում տվյալների ճշտում, մուտքագրում տեղեկատվական բազա, տնային այցելություններ</p>	Եզրակացություն , կարգադրություն , առաջարկություն	1	1

75	Քաղաքացիներին սոցիալական քարտերի հաշվառում և տրամադրման աշխատանքների իրականացում	Ընթացիկ	Սոցիալական քարտի տրամադրման գործընթացի ապահովում	Սահմանված ժամկետներում ճշտված փաստաթղթերի հավաքագրում, հաշվառում և տվյալների մուտքագրում տեղեկատվական բազա	Եզրակացություն	1	1
76	Համագործակցություն ՀՀ միգրացիայի և փախստականների վարչության հետ, անօթևան փախստականների հաշվառում, մարդասիրական օգնությունների ծրագրերի իրականացում	Ընթացիկ	Անօթևան փախստականի կարգավիճակ ունեցող քաղաքացիներին սոցիալական աջակցության, խիստ անապահով ընտանիքներին մարդասիրական օգնությունների տրամադրում, հասցեականության ապահովում	Օգնության ծրագրերի վերաբերյալ տվյալների մուտքագրում տեղեկատվական բազա և իրազեկում	Տեղեկանք	1	1
77	Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեցող ընտանիքներում ծնված 1-ին և 2-րդ երեխաների, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունեցող քաղաքացիների, ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ երեխային տրվող միանվագ գումարի իրավունք ունեցող ընտանիքների փաստաթղթերի ընդունում և հաշվառում: Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված նպաստ ստացող 2010-11թթ-ի ուսումնական տարում առաջին դասարան հաճախող երեխաների փաստաթղթերի հաշվառում	Ընթացիկ	Ընտանիքում ծնված 1-ին, 2-րդ և 3-րդ երեխաների միանվագ դրամական օգնության, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակում, Առաջին դասարան հաճախող երեխաներին միանվագ գումարների վճարման ապահովում	Ճշտված փաստաթղթերի հավաքագրում, հաշվառում և տվյալների մուտքագրում տեղեկատվական բազա,	Եզրակացություն , կարգադրություն	1	1

78	Գործակալություններում 2006թ-ին հաշվառված ավանդների փոխհատուցման գումարների իրավունք ունեցող քաղաքացիների խնդրահարույց հարցերի ճշտում, վճարման աշխատանքների, օրենքների վերաբերյալ պարզաբանումների ապահովում	Ընթացիկ	Ավանդների փոխհատուցման իրավունք ունեցող քաղաքացիներին գումարների վճարման ապահովում	Ավանդների փոխհատուցման իրավունք ունեցող քաղաքացիների խնդրահարույց տվյալների ճշտում, տրամադրված գումարների վերաբերյալ տվյալների տեղեկատվական բազայի առկայություն	Եզրակացություն , կարգադրություն	1	1
79	Այլ ընթացիկ աշխատանքներ	Ընթացիկ	X	X	X	6	8
80	Չպլանավորված աշխատանքներ	Ընթացիկ	X	X	X	3	4
Ընդամենը						100	113

ՀՀ Սյունիքի մարզպետ

Սուրեն Մերգեյի Խաչատրյան

**ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար**

Ռազմիկ Պատվականի Ղազարյան